տնտեսականը եւ առողջութիւնը լիովին քայ-
քայուած էր, ինչպէս կիսակործան են Թոր-
դումի բերդերն ու ամրոցները, աշտարակ-
ները, վանքերն ու տաճարները: Բարոյա-
պէս եւ տնտեսապէս հիւծուած այս ժողո-
վուրդը ապրում է նախնիքներից մնացած
այգիների եւ պարտէզների բերքերով, որոնք
տարուց-տարի չորանում, նուազանում են
ինչպէս նուազում է, չքանում բնակչու-
թիւնը: Սեռական քրոնիկ ախտերով վարա-
կուած, հիւծուած այս ժողովուրդը ո՛չ
բժիշկ ունի, ոչ դեղագործ, ո՛չ ուսուցիչ
ունի եւ ո՛չ դպրոց. սպասում է մահին կամ
աշխարհավերջի Մահդի մարգարէին, որ
փրկուի: Պատերազմից առաջ 23 Հայ գիւղեր
կային այս գաւառում, որոնք շատ էին օգ-
նում սրանց, արհեստներով, վիրաբուժու-
թեամբ եւ դեղերով. բայց նրանց նպաստից
էլ զրկուեցին, շնորհնեւ Իհթիհատի ծրագրած
հայկական կոտորածներին: Հայ գիւղերում
կային արհեստաւորներ, որոնք շատ չնչին
վարձով լրացնում էին Իսլամների կարիք-
ները. բայց այս օր էշ պայտող էլ չունին,
դանակ սրող էլ չկայ ամբողջ գաւառում:
Երկրագործը չինարար ձեռքերի կարօտ է,
ո՛չ թէ շղթայ հիւսող, այլ ճոպան ոլորող
մարդն էլ չեն գտնում:

Ճամբորդը Թորդում չհասած մի քանի
րոպէով հանգստանում է այն Խանի մէջ,
որը դարերով ծառայել է. բայց վերանորո-